Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2024-2025 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
9 – րդ դասարան

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**1. Աֆրիկյան գետերից որի՞ մի հատվածում են իրար սահմանակցում միանգամից 4 երկիր**
1. Նեղոս 2. Կոնգո 3. Զամբեզի 4. Լիմպոպո

**2. Եվրոպայի խոշորագույն նավահանգիստն է՝**
1. Մարսել 2. Ռոտերդամ 3. Համբուրգ 4. Բարսելոնա

**3. Ամենաերկար ծովային սահմաններով երկիրն է՝**
1. ՌԴ 2. ԱՄՆ 3. Չինաստան 4. Կանադա

**4. Նշված քաղաքներից արևափայլի տևողությունն ամենաերկարն է՝**
1. Մադրիդ 2. Լոնդոն 3. Փարիզ 4. Վարշավա

**5. Նշված երկրներից որի՞ անտառապատ մակերեսն է ավելի փոքր**
1. ՌԴ 2. Կանադա 3. Ավստրալիա 4. Չինաստան

**6. Ավստրալիայի ո՞ր հատվածում է տեղումների առավելագույնը դիտվում մայիս-սեպտեմբեր ժամանակահատվածում**
1. Հյուսիս-արևելք 2. հարավ-արևելք 3. կենտրոն 4. հարավ-արևմուտք

**7. Քարտեզում հավասար խորություն ունեցող տեղանքները միացնող հավասարագծերը կոչվում են՝**
1. իզոբար 2. իզոբաթ 3. իզոթերմ 4. իզոհիեթ

**8. Հայկական լեռնաշխարհում ցեխահոսքերի վտանգը առավել մեծ է՝**
1. Արևելապոնտական լեռների հյուսիսահայաց լանջերին
2. Արևելյան Տավրոսի լեռների հյուսիսահայաց լանջերին
3. Հայկական Պար լեռների հյուսիսահայաց լանջերին
4. Ուրմիա լճի ավազանում

**9. ՀՀ նշված քաղաքներից կայուն ձնածածկույթն առավել երկար է պահպանվում՝**
1. Գորիսում 2. Ագարակում 3. Ապարանում 4. Տաշիրում

**10. ՀՀ մարզերից բացարձակ բարձրությունների ամենամեծ ամպլիտուդն ունի՝**
1. Գեղարքունիքը 2. Սյունիքը 3. Արագածոտնը 4. Լոռին

**11. ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներից որու՞մ է ջրային տարածքի բաժինը ավելի մեծ**
1. Սևան ազգային պարկ 2. Արփի լիճ ազգային պարկ
3. Շիկահողի արգելոց 4. Դիլիջան ազգային պարկ

**12. Մշտական քամիներն օվկիանոսներում առաջացնում են՝**
1. ալեբախում 2. ցունամի 3. մակընթացություն 4. օվկիանոսային հոսանք

**13. Տարվա ո՞ր եղանակին է զբոսաշրջային ամենապասիվ սեզոնը Մալդիվներում**
1. Ամառ 2. Աշուն 3. Ձմեռ 4. Գարուն

**14. Եվրոպական գաճաճներից հանրապետություն է՝**
1. Մոնակո 2. Սան Մարինո 3. Լյուքսեմբուրգ 4. Անդորրա

**15. Սեռատարիքային բուրգը ո՞ր երկրի ժողովրդագրական փոփոխություններն է ցույց տալիս**




1. Բրազիլիա 2. Սոմալի 3. Հնդկաստան 4. Շվեդիա

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Որքա՞ն է բեռների տեղափոխման միջին հեռավորությունը Ա երկրում, եթե բեռնաշրջանառությունը 500 մլրդ տ*կմ է, իսկ տեղափոխված բեռների ընդհանուր զանգվածը՝ 5 մլրդ տոննա:

17. Քանի սանտիմետր է 5000կմ երկարությամբ պետական սահմանի երկարությունը 1:10000000 մասշտաբի քարտեզում:

18. Որոշել երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե ընդհանուր բնակչության թիվը 16մլն մարդ է, որից գյուղաբնակ են 4մլն մարդ:

19. Քաղաքում կառուցվում է նոր թաղամաս՝ նախատեսված 10 հազար բնակչի համար: Ջրամատակարարման նպատակով կառուցվում է նոր ջրամբար, որը սնվելու է 0.1խմ/վրկ ծախս ունեցող աղբյուրից: Հաշվի առնելով, որ օրական մեկ մարդու հաշվով պահանջվում է 432լ ջուր՝ աղբյուրի օրական հոսքի քանի տոկոսն է անհրաժեշտ ամբարել ջրամբարում:

20. Հանքարդյունահանող կազմակերպությունը դիմել է նոր հանքի շահագործման թույլտվության համար՝ ներկայացնելով նախնական հետախուզման հետևյալ տեղեկությունները. շահագործման ենթակա օգտակար հանածոյի ընդհանուր ծավալը 3մլն խմ է: Կազմակերպությունը սահմանում է տարեկան 250 օրյա աշխատանքային ժամանակացույց, իսկ օրական արդյունահանվող օգտակար հանածոյի ծավալը՝ 1000խմ: Քանի տարում է կազմակերպությունը նախատեսում արդյունահանել օգտակար հանածոյի ամբողջ ծավալը:

**Առարկայական հանձնաժողովի նախագահ՝** **Վարդան Ասատրյան**